ԻՆՉՈ՞Ւ Է ԴԱՆԴԱՂԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՃԸ. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2023.2-32

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնօրենի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 170 գիտական հոդվածների, 21 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

https://orcid.org/0000-0002-3019-4075

Հիմնաբառեր. *գյուղատնտեսություն, աճ, պետական աջակցություն, հողերի մասնատվածություն, փոքր չափեր, արտադրողականություն*

Հայաստանում տևական ժամանակ է՝ գյուղատնտեսության աճը շատ ցածր է: Անգամ պետական աջակցության համալիր միջոցառումները սպասվող արդյունքը չեն ապահովում: Այս երևույթի պատճառները բազմաթիվ են, բայց գլխավորները տնտեսությունների փոքր չափերն ու հողամասերի մասնատվածությունն են: Դրանց հետևանքով չափազանց սահմանափակ են գյուղատնտեսության թվայնացման, համալիր մեքենայացման, ոռոգման արդյունավետ համակարգերի և ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները: Ճյուղի արտադրական գործունեության վրա բացասաբար են անդրադառնում նաև գյուղատնտեսության նախարարության բացակայությունը և ճյուղին աջակցող ենթակառուցվածքների պակասը: Արդյունքում, եթե անգամ տարին բարենպաստ է, արտադրողը պարբերաբար առերեսվում է ֆինանսական շուկայի կտրուկ տատանումներին, բերքի իրացման դժվարություններին, ոռոգման ջրի անբավարարությանը, հիվանդություններին ու վնասատուների տարածմանը և այլ հիմնախնդիրների: Վերջին տարիների աշխարհաքաղաքական լարվածությունը և հակամարտությունները նույնպես ազդում են գյուղատնտեսության զարգացման, պարենային ապրանքների և արտադրության միջոցների արտաքին առևտրի վրա ու էլ ավելի սրում պարենային անվտանգության հիմնախնդիրը:

Հոդվածում ներկայացվում է Հայաստանի գյուղատնտեսության վերջին տարիների վիճակը, գնահատվում ոլորտի աճի դանդաղման պատճառները և առաջարկվում դրանց հաղթահարման միջոցառումներ:

Ուսումնասիրելով 1999-2022 թվականներին ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի շարժընթացը՝ կարելի է նկատել, որ այս ոլորտը ոչ միայն կայուն աճ չի ունեցել, այլև մի տևական շրջան արձանագրել է համախառն արտադրանքի ծավալի անկում: Ինչո՞վ է պայմանավորված այդ տեղապտույտը, և ինչո՞ւ չի առաջադիմում ագրարային ոլորտը: Այս հարցերի պատասխանը գտնելու համար պետք է գնահատել գյուղատնտեսական արտադրության վրա ազդող հիմնական գործոններն ու դրանց ինտենսիվության մակարդակը:

ՀՀ տարածքի ու բնակչության համեմատ՝ գյուղատնտեսության բնական և տնտեսական ներուժը փոքր չէ: Բավական է նշել, որ ընդամենը 2974,3 հազ. հա հողային մակերեսից 2042,5 հազ. հա-ն կամ մոտ 68%-ը գյուղատնտեսական օգտագործելի հողեր են[1]: ՀՀ ջրային օգտագործելի ռեսուրսները, որոնք ներառում են ՀՀ տարածքում ձևավորվող գետային հոսքը, անդրսահմանային Արաքս և Ախուրյան գետերի հոսքի Հայաստանի մասնաբաժինը և վերականգնվող ստորերկրյա ջրային պաշարները, բացառությամբ էկոլոգիական թողքի, 9049,0 մլն խ. մ են[2]: Այդ քանակությունից ջրառը 2021 թ. կազմել է ընդամենը 2966,5 մլն խ. մ, որից 1561,9 մլն խ. մ-ն օգտագործվել է ոռոգման նպատակով[3]: Այդուհանդերձ, գյուղատնտեսության արտադրողականության և արդյունավետության ցածր մակարդակը, ոռոգման և ջրարբիացման թույլ զարգացած ենթակառուցվածքները, ավանդական տեխնոլոգիաների և մեթոդների գերակայությունը, փոքր և մասնատված հողամասերը, գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ցածր եկամտաբերությունը, բերքի՝ ժամանակին հավաքման ու անկորուստ իրացման դժվարությունները լուրջ հիմնախնդիրներ են ստեղծում ագրարային ոլորտի զարգացման համար: Դրանք հաղթահարելը և կայուն զարգացող գյուղատնտեսություն ունենալը երկրի տնտեսական առաջնահերթություններից են:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016 թվականից հետո ՀՀ գյուղատնտեսությունը որոշակի դրական տեղաշարժ է դրսևորել միայն 2020 (3,2%) և 2022 (0,4%) թվականներին (աղյուսակ 1):

Մեր կարծիքով, այս երևույթի խորքային պատճառներն են հողերի մասնատվածությունը, ոռոգման ջրի հասանելիության սահմանափակումները, գյուղատնտեսական տեխնիկայով և պարարտանյութերով ցածր ապահովվածությունը, ինչպես նաև բերքահավաքի ու հետբերքահավաքային շրջանի բավական մեծ կորուստները:

[1] https://www.armstat.am/file/doc/99533308.pdf
[2] https://www.armstat.am/file/article/eco_book_2021_1.pdf
[3] https://www.armstat.am/file/article/eco_book_2021_9.pdf

Աշոտ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2003 թ. ավարտել է ՀՊԱՀ մագիստրատուրան և ընդունվել ասպիրանտուրա: 2007 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, ապա դոցենտի կոչում: 2010 թ.-ից սկսած՝ դասավանդում է տարբեր բուհերում: Հեղինակ է մեկ տասնյակից ավելի գիտական հրապարակումների:

https://orcid.org/0000-0001-7480-5328

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի շարժընթացը

(1999-2022 թթ., մլն դրամ)[4]

Տարիները	Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընթացիկ գներով	Համեմատելի գներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի փոփոխությունը (%)	Տարիները	Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընթացիկ գներով	Համեմատելի գներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի փոփոխությունը (%)
2022	1021367.2	100.4	2010	636683.4	86.4
2021	934381.3	99.1	2009	552098.6	99.5
2020	833317.4	103.2	2008	628131.7	101.3
2019	853259.8	95.9	2007	633877.4	109.6
2018	892926.7	92.8	2006	555922.3	100.4
2017	908617.3	97.6	2005	493017.9	111.2
2016	878491.7	96.2	2004	504078.0	114.5
2015	945438.0	108.4	2003	410138.4	104.3
2014	982958.7	106.3	2002	377654.4	104.4
2013	919089.4	107.1	2001	351015.9	111.6
2012	841509.9	109.5	2000	281173.4	97.5
2011	795062.2	113.9	1999	311687.8	101.3

Այս ամենը միասին առաջացրել է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների ցածր շահագրգռվածություն, որի ակնհայտ դրսևորումը տարեցտարի այլ աշխատանք գտնելու պատրվակով գյուղից հեռացողների թվի ավելացումն է: Մայրաքաղաքում հատկապես շինարարության ոլորտում զբաղված նախկին գյուղաբնակները մեզ հետ ունեցած զրույցներում այսպես են հիմնավորում իրենց կարգավիճակի փոփոխությունը. «Եթե անգամ 1,5-2 հա մասնավորեցված հողը մշակում ենք, ապա մեկ հեկտարի հաշվով բարենպաստ տարվա զուտ եկամուտը չի գերազանցում 200-350 հազ. դրամը: Մինչդեռ շինարարության ոլորտում ամսական գրեթե նույնքան գումար ենք վաստակում»: Թերևս, մեկնաբանություններն ավելորդ են: Արդյունքում, շարունակվում են գյուղական բնակչության արտահոսքը և դրա հետևանքով գյուղատնտեսական ներուժի ոչ լիարժեք օգտագործումը: Բավական է նշել, որ 2022 թ. 443 հազ. հեկտար վարելահողից ցանքի տակ է դրվել միայն 212,4 հազ. հեկտարը կամ մոտ 48%-ը (աղյուսակ 2)[5]: Հարուստ ջրային ռեսուրսներ ունենալու պարագայում ոռոգվել է վարելահողերի և բազմամյա տնկարկների ընդամենը 154 հազ. հեկտարը կամ 32%-ը[6]:

Ըստ աղյուսակ 3-ի տվյալների՝ 2021 թ., 2010 թ.-ի համեմատությամբ, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կրճատվել են մոտ 20%-ով, իսկ ոչ նպատակային օգտագործվող վարելահողերի տարածությունն ավելացել է 31,1%-ով կամ 51,3 հազ. հեկտարով: Մեր հարցումները, ինչպես նաև առանձին գյուղական համայնքներում կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ վարելահողերը նպատակային չեն օգտագործվում հիմնականում հետևյալ պատճառներով.

1. ցածր եկամտաբերություն, իսկ որոշ դեպքերում՝ վնասաբերություն,
2. հողատարածքի փոքր չափեր և մասնատվածություն,

[4] https://www.armstat.am/am/?nid=12&id=03001
[5] https://www.armstat.am/file/article/29_gt_2022.pdf
[6] https://www.armstat.am/file/article/eco_book_2021_9.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ գյուղատնտեսական հողերը և հողօգտագործման մակարդակը *(2010-2021 թթ.)*[7]

Ցուցանիշները	2010	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Ընդամենը գյուղատնտեսական հողեր, հազ. հա	2100,9	2045,7	2045,5	2043,8	2049,5	2044,2	2043,5	2042,5	
որից՝									
վարելահողեր	*448,5*	*446,7*	*446,4*	*446,0*	*445,6*	*444,8*	*444,0*	*443,4*	
բազմամյա տնկարկներ	*32,9*	*34,4*	*34,7*	*34,8*	*35,3*	*36,4*	*37,3*	*38,1*	
խոտհարքներ	*127,1*	*121,1*	*121,1*	*121,0*	*121,1*	*121,1*	*121,1*	*121,1*	
արոտներ	*1104,3*	*1051,3*	*1051,3*	*1050,8*	*1051,6*	*1051,1*	*1051,6*	*1049,9*	
այլ հողեր	*388,1*	*392,2*	*392,0*	*391,2*	*391,0*	*390,8*	*390,5*	*389,9*	
Ցանքատարածություններ	283,6	337,5	353,4	294,5	242,3	227,9	222,7	227,2	212,4
Ոչ նպատակային օգտագործվող վարելահողեր	164,9	109,2	93,0	151,5	203,3	216,9	221,3	216,2	
Վարելահողերի օգտագործման մակարդակ, %	63,2	75,5	79,1	66,0	54,4	51,2	50,2	51,2	

3. ոռոգման դժվարություններ,
4. իրացման ցածր գին և շուկայահանման հիմնախնդիրներ,
5. պետական աջակցության ոչ արդյունավետ գործիքներ:

Նշված գործոնների ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է կիրառել աշխարհի տարբեր երկրներում փորձարկված մի շարք օգտակար միջոցներ: Ահավասիկ, գյուղատնտեսական արտադրության եկամտաբերության մակարդակի բարձրացման ամենագործուն միջոցը ինտենսիվ տեխնոլոգիաների ու պետական աջակցության տարբեր կառուցակարգերի կիրառությունն է: Սխալ կլինի ասել, թե այս ուղղությամբ ՀՀ-ում քայլեր չենկատարվում. 2010-2021 թթ.-ին գյուղատնտեսության զարգացումը խթանելու և ֆերմերներին տարբեր ուղղություններով օժանդակելու նպատակով իրագործվել են պետական աջակցության մի շարք ծրագրեր ու միջոցառումներ: Դրանցից մատնանշենք մոտ երկու տասնամյակ սուբսիդավորվող գնով ոռոգման ջրի տրամադրումը, բյուջետային հատկացումներով գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելումն ու բույսերի վնասատուների դեմ պայքարի միջոցառումները, հողօգտագործողներին և գյուղատնտեսական հումք մթերողներին արտոնյալ, ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրումը, ինտենսիվ խաղողի, պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնադրման, ինչպես նաև «խելացի անասնաշենքերի» կառուցման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը, գյուղատնտեսական տեխնիկայի, ագրովերամշակման ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցությունը և այլ միջոցառումներ: Որպես հիմնավորում՝ նշենք, որ 2011 թ.-ի համեմատությամբ 2021 թ. գյուղատնտեսության բյուջետային հատկացումները 5,8 մլրդ դրամից հասել են մոտ 23,8 մլրդ դրամի կամ ավելացել ավելի քան 4 անգամ (աղյուսակ 3):

Գյուղատնտեսության պետական աջակցության 15 ծրագրից 2-ն իրականացվել է գրեթե 10 տարի շարունակ՝ առանց ընդհատումների, 7-ը՝ սկսած 2017-2018 թթ.-ից, 2-ը՝ 2019 թ.-ից: 2020 թ.-ից ի վեր իրակա-

[7] Հաշվարկները կատարել են հեղինակները՝ ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվությունների (2010-2021 թթ.) հիման վրա, https://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերը

Տարիներ	Ընդհանուր ծախսերը գյուղատնտեսության վրա, մլն դրամ	Գյուղատնտեսության զարգացման միջոցառումների գծով ծախսերը, մլն դրամ	Գյուղատնտեսության զարգացման կենսաբանական միջոցառումների գծով ծախսերի դրամական արտահայտությունը (%)	Ընդհանուր ծախսերից գյուղատնտեսության զարգացման միջոցառումների գծով ծախսերի տեսակարար կշիռը (%)
2010	954.316	7.171	-	0.75
2011	986.509	5.808	81	0.6
2012	1006.102	9.106	156.8	0.9
2013	1142.890	9.333	102.5	0.8
2014	1235.053	9.651	103.4	1.78
2015	1408.996	20.209	209.4	1.4
2016	1449.064	27.087	134.0	1.9
2017	1504.802	10.517	39	0.7
2018	1447.083	9.576	91	0.7
2019	1629.4	8.101	85	0.5
2020	1,894.6	11.331	140	0.6
2021	2,004.3	23.773	209.8	1.2

նացվում են 4 նոր ծրագրեր: Միաժամանակ, 2019-2021 թթ.-ին պետական աջակցություն է ցուցաբերվել մի շարք նոր միջոցառումների գծով:

Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է, որ 2021 թ.-ին 2020 թ.-ի նկատմամբ գյուղատնտեսության վրա կատարված ծախսերը բացարձակ արտահայտությամբ ավելացել են 12.44 մլրդ դրամով, իսկ պետական աջակցության ծախսերը՝ 2021 թ.-ին 2020 թ.-ի նկատմամբ՝ 10.4 մլրդ դրամով:

Այս միջոցառումների արդյունավետությունը դեռևս ցածր է, որի մասին է վկայում հիմնական արդյունքային ցուցանիշների շարժընթացը: Ուստի, բացի պետական ֆինանսական աջակցությունից, պետք է համապատասխան օրենսդրական հիմքեր ստեղծել՝ կիրառելով վարելահողերի օգտագործման մակարդակի բարձրացման վարչական միջոցներ: Ահավասիկ, ներկայում ՀՀ գրեթե բոլոր գյուղական համայնքներում կան լքված հողեր, որոնց սեփականատերերը համայնքից բացակայում են: Արդյունքում, այդ հողերը ոչ միայն չեն մշակվում, այլև տարիներ շարունակ դրանց համար հողի հարկ չի վճարվում: Մեր կարծիքով, նման պայմաններում համայնքի ավագանու որոշմամբ, պահպանելով սեփականության իրավունքը, այդ հողամասերը պետք է օգտագործման տրամադրվեն առավել ակտիվ գյուղատնտեսներին: Նման գործարքի համար անհրաժեշտ է ստանալ սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը, իսկ դրա անհնարինության կամ առանց հիմնավոր պատճառների անհամաձայնության դեպքում՝ գործել օրենքի ուժով: Վերջինս պահանջում է ՀՀ հողային օրենսգրքի հոդվածներ 43-ում, 44-ում և 102-ում, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 12-ում, 18-ում, 32-ում ու 43-ում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ իրավական հիմքեր ստեղծելով պասիվ սեփականատերերի կողմից անօգտագործելի թողնված հողամասերն առավել ակտիվ գյուղատնտեսներին որոշակի ժամանակահատվածով անհատույց օգտագործման կամ վարձակալության սկզբունքով հանձնելու համար: Այս միջոցառումը կարող է լուծել մի քանի խնդիր, նախ՝ արդյունավետ ու նպատակային ձևով օգտագործել հողը՝ որպես

ազգային հարստություն, երկրորդ՝ ապահովել հողի հարկի վճարումները և երրորդ՝ կանխել հողի դեգրադացման գործընթացները: Բացի այդ, ներկայում ինտենսիվ տեխնոլոգիաներով համեմատաբար խոշոր տնտեսությունների զարգացման ներդրումներին խոչնդոտում է խոշոր հողակտորների բացակայությունը: Ուստի միանգամայն հիմնավոր է, որ ինչպես չօգտագործվող, այնպես էլ ոչ նպատակային օգտագործվող վարելահողերը մրցութային կարգով և երկարաժամկետ պայմանագրով տրամադրվեն ներդրողներին, իսկ սեփականատերերին միանվագ կամ յուրաքանչյուր տարի վճարել հաշվարկային զուտ եկամտի գումարի մի մասը:

Միանգամայն ողջունելի է ՀՀ կառավարության 2022 թ. «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025 թթ. ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1220–L որոշման ընդունումը[8]: Չնայած այս որոշման որոշակի բարդություններին՝ այն ներկայացնում է գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման կարևորությունը և ընդհանուր կառուցակարգերը: Որոշման նպատակն է 2023-2025 թթ. պետական աջակցությամբ խթանել հողերի միավորման ուղով հատկապես վարելահողերի նպատակային օգտագործումը և արդյունավետ կառավարումը, գյուղատնտեսության ոլորտում ներդրումների ծավալի ավելացումը[9]: Մասնավորապես՝ նախատեսվում է 30 հա և ավելի մակերեսով հողերի միավորման և դրանցում ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման համար ծախսերը փոխհատուցել դրանց դիմաց շահառուների փաստացի կատարած վճարումների 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 200 հա մակերեսով միավորված հողերի վրա կատարված աշխատանքների համար: Ակնկալվում է, որ միավորվող հողերի չափը 2023 թ. կկազմի շուրջ 1000 հա, 2024 թ.՝ շուրջ 1500 հա, 2025 թ.՝ շուրջ 2000 հա, ընդհանուր առմամբ՝ 4500 հա խոշորացված հողակտոր:

Ներկա պայմաններում Արարատյան դաշտում 100 հա հող ձեռք բերելու համար պետք է բանակցել առնվազն 90 սեփականատիրոջ հետ, որոնց մի մասի գտնվելու վայրն անհայտ է, մի մասը, ցավոք, մահացել է, բայց նրանց ժառանգության իրավունքները և այլն ձևակերպված չեն: Գործնականում մարդիկ մտնում են փակուղի և հրաժարվում ներդրումային ծրագրերից10: Այս որոշման կառուցակարգերով հողերի խոշորացումը թույլ է տալիս ակնկալել, որ գյուղատնտեսության ոլորտում խոշոր ներդրումներ պլանավորող տնտեսավարող սուբյեկտները, հաշվի առնելով պետական աջակցության չափը, կարագացնեն հողակտորների խոշորացման գործընթացը:

Գրեթե յուրաքանչյուր տարի ականատես ենք լինում հողագործների դժգոհություններին՝ կապված ոռոգման հետ: Այստեղ ևս անհրաժեշտ է կիրառել կտրուկ միջոցներ: Նախ՝ ոռոգման ջրի սուբսիդավորման գործող համակարգը վաղուց հակասում է մրցութային հիմունքներով և շուկայական սկզբունքներով ծառայությունների մատուցման տրամաբանությանը: Բավական է նշել, որ 1 խ. մ ոռոգման ջրի մատակարարման դիմաց 11 դրամը գերազանցող սուբսիդավորվող գումարի հիմքը ՋՕԸ ծախսերի կամային հաշվարկներն են: Վաղուց հասունացել է ավազանային կառավարման և ծախսերի հիմնավորված նորմաների ու նորմատիվների կիրառության անցման անհրաժեշտությունը: Վերջապես, հեկտարի հաշվով ոռոգման ջրի համար վճարի սկզբունքը թույլ չի տալիս կիրառել արդարացի ջրախնայողական համակարգ: Հետևաբար՝ որքան էլ շատ ներդրումներ կատարվեն նոր ջրամբարների կառուցման և ոռոգման համակարգերի վերակառուցման համար, ներկայիս անհաշվենկատ ջրօգտագործման ու մեծ կորուստների պայմաններում էական արդյունք չի ստացվի:

[8] https://www.irtek.am/views/act.aspx?aid=117278
[9] https://www.1lurer.am/hy/2022/08/04/%, Կառավարությունը հաստատեց գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման աջակցության ծրագիրը:
[10] Նույն տեղում:

Գյուղատնտեսության կայուն զարգացման ոլորտում կարևորվում են նաև ինտենսիվ այգեգործության և անասնաբուծության հնարավորությունների ընդլայնումը, բնական և տնտեսական ռիսկերի կառավարման կառուցակարգերի կիրառությունը, ինչպես նաև տեխնիկական զինվածության ու թվայնացման խթանումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Ս., Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր., «Լիմուշ», 2010 թ., 233 էջ:
2. Նազարեթյան Հ., Գյուղատնտեսությունը Հայաստանում. ակնարկ, https://evnreport.com/arm/magazine-issues/agriculture-in-armenia-an-overview-2/
3. https://www.armstat.am/file/doc/99533308.pdf
4. https://www.armstat.am/file/article/eco_book_2021_1.pdf
5. https://www.armstat.am/file/article/eco_book_2021_9.pdf
6. https://www.armstat.am/am/?nid=12&id=03001
7. https://www.armstat.am/file/article/29_gt_2022.pdf
8. https://www.armstat.am/file/article/eco_book_2021_9.pdf
9. https://www.minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun,
10. https://www.irtek.am/views/act.aspx?aid=117278
11. https://www.1lurer.am/hy/2022/08/04/%

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, доктор экономических наук, профессор
Ашот АВЕТИСЯН
Преподаватель финансово-экономического колледжа АГЭУ, кандидат экономических наук, доцент

АГРАРНАЯ ПОЛИТИКА

ПОЧЕМУ В АРМЕНИИ ЗАМЕДЛИЛСЯ РОСТ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА? ПРОБЛЕМЫ И РЕШЕНИЯ

Экономический рост сельского хозяйства в Армении долгое время был очень низким. Даже комплексные меры государственной поддержки не дают ожидаемых результатов. Причин этому явлению много, но главная причина – небольшие размеры хозяйств и раздробленность участков. В результате ограничены возможности цифровизации, комплексной механизации, внедрения эффективных систем орошения и интенсивных технологий сельского хозяйства.

Отсутствие Министерства сельского хозяйства и ослабление обслуживающих инфраструктур также негативно сказываются на производственной деятельности сектора. В результате, даже если год благоприятный, производитель регулярно сталкивается с резкими колебаниями финансового рынка, трудностями реализации урожая, недостатком поливной воды, распространением болезней и вредителей и другими проблемами. Геополитическая напряженность и конфликты последних лет также сказываются на развитии сельского хозяйства, внешней торговли продуктами питания и средствами производства и обостряют проблему продовольственной безопасности.

В данной статье представлено состояние сельского хозяйства Армении за последние годы, оценены причины замедления экономического роста и предложены меры по их преодолению.

Ключевые слова: *сельское хозяйство, рост, государственная поддержка, раздробленность земель, размеры хозяйств, продуктивность*

Samvel AVETISYAN
Senior Expert at «Amberd» Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor
Ashot AVETISYAN
Lecturer at ASUE College of Finance and Economics,
PhD in Economic Sciences, Associate Professor

AGRARIAN POLICY

WHY DID THE GROWTH OF AGRICULTURE SLOW DOWN IN ARMENIA? PROBLEMS & SOLUTIONS

The economic growth of agriculture in Armenia has been very low for a long time. Even comprehensive measures of state support do not give the expected results. There are many reasons for this phenomenon, but the main reason is the small size of farms and the fragmentation of plots. As a result, the possibilities of digitalization, complex mechanization, the introduction of efficient irrigation systems and intensive agricultural technologies are limited.

The absence of the Ministry of Agriculture and the weakening of service infrastructures also have a negative impact on the production activities of the sector. As a result, even if the year is favorable, the producer regularly faces sharp fluctuations in the financial market, difficulties in selling the crop, lack of irrigation water, the spread of diseases and pests, and other problems. The geopolitical tensions and conflicts of recent years also affect the development of agriculture, foreign trade in food products and means of production and aggravate the problem of food security.

This article presents the state of agriculture in Armenia in recent years, assesses the reasons for the slowdown in economic growth and proposes measures to overcome them.

Keywords: *agriculture, growth, government support, land fragmentation, farm size, productivity*